ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2012թ. **N__-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն՝ քաղաքացի Արմեն Բունիաթյանին սեփականության իրավունքով պատկանող, Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի հ.31/8 հասցեում գտնվող 1713.97քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.04.2008թ. հ.2587193 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևան-Աշտարակ ավտոճանապարհին կից «Հուսո Ավանի» հարևանությամբ գտնվող համարժեք 1713.97քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է սեփականության իրավունքով (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.04.2008թ. հ.2587193 վկայական), քաղաքացի Արմեն Վոլոդյայի Բունիաթյանին պատկանող Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի հ.31/8 հասցեում գտնվող 1713.97քմ մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևան-Աշտարակ ավտոճանապարհին կից «Հուսո Ավանի» հարևանությամբ գտնվող համարժեք 1713.97քմ մակերեսով հողամասի հետ:

Արմեն Բունիաթյանը բազմիցս դիմել է Երևանի քաղաքապետարան Քուչակ թաղամասի հ.31/8 հասցեում գտնվող 1713.97քմ մակերեսով հողամասի վրա շինարարություն կատարելու թույլտվություն ստանալու խնդրանքով: Սակայն հաշվի առնելով հարակից շենքերի բնակիչների բազմաթիվ խնդրանքը և այն հանգամանքը, որ Երևան համայնքի վարչական շրջանները, այդ թվում նաև Ավան վարչական շրջանը, իրականացնում են բազմաբնակարան բնակելի շենքերի ներբակային և հարակից տարածքների կանոնակարգման /բարեկարգման, կանաչապատման, մանկական խաղահրապարակների կազմակերպման և այլն/ ծրագրեր և այդ ծրագրերից մեկի շրջանակներում է հայտնվել նաև Արմեն Բունիաթյանին վերը նշված հասցեում սեփականության իրավունքով պատկանող հողամասը՝ վերջինիս խնդրանքը չի բավարարվել:

Ստեղծված իրավիճակում խնդրի կարգավորման նպատակով Արմեն Բունիաթյանին առաջարկվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող, Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի հ.31/8 հասցեում գտնվող 1713.97քմ մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևան-Աշտարակ ավտոճանապարհին կից «Հուսո Ավանի» հարևանությամբ գտնվող համարժեք 1713.97քմ մակերեսով /ծածկագիր 01-004-056-001/ հողամասի հետ:

Տեղի ունեցած բազմաթիվ բանակցությունների արդյունքում, հողամասերի փոխանակման վերաբերյալ հաջողվել է ձեռք բերել Ա.Բունիաթյանի համաձայնությունը:

Քննարկվող հողամասերը համարժեք են, համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2) և 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման սխեմայի գտնվում են 7-րդ գոտում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N1517-Ն որոշմամբ Երևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել են Երևան համայնքին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 3–րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում՝ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ առաջանում է Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու մասին Երևանի քաղաքապետի որոշում ընդունելու անհրաժեշտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ
ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ